



ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

29 նոյեմբերի 2005թ.

N 476

ք.Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՎՏԱՆԳԱՎՈՐ ԵՎ ԱՅԼ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՆԵՐՍՈՒԾՈՒՄԸ, ԱՐՏԱՅԱՆՈՒՄԸ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՎ ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ ԿԱՐԳԱՎՈՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը թափոնների ներմուծումը, արտահանումը և հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրումը կարգավորելու նպատակով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Արգելել՝

ա) բոլոր տեսակի թափոնների ներմուծումը հանրապետություն՝ դրանց պահեստավորման և թաղման նպատակով.

բ) վտանգավոր թափոնների ներմուծումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքով դրանց տարանցիկ փոխադրումը՝ համաձայն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության կողմից հաստատված՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արգելված վտանգավոր թափոնների ցանկի:

2. Թափոնների և երկրորդային հումքի ներմուծումը հանրապետությունը թույլատրելի միայն դրանց ուղղակի կամ վերամշակումից հետո օգտագործելու նպատակով:

3. Հաստատել Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն վտանգավոր և այլ թափոնների ներմուծման, հանրապետությունից արտահանման և հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրման վերահսկողության կարգը՝ համաձայն հավելվածի:

4. Սահմանել, որ՝

ա) վտանգավոր և այլ թափոնների ներմուծումը, արտահանումը և հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրումը ենթակա է պարտադիր նախնական հայտավորման (ծանուցման) և կատարվում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավասու պետական մարմնի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչության թույլտվությամբ.

բ) մարդու առողջության և շրջակա բնական միջավայրի համար վտանգ չներկայացնող թափոնների ներմուծումը, արտահանումը և հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրումը կատարվում է ընդհանուր հիմունքներով՝ առանց նախնական հայտավորման (ծանուցման):

5. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարությանն առընթեր շրջակա միջավայրի և բնական ռեսուրսների վարչությանը՝

ա) Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների զարգացման նախարարության և շահագրգիռ այլ

նախարարությունների ու գերատեսչությունների հետ համատեղ մշակել և հաստատել վտանգավոր ու այլ թափոնների ներմուծման, արտահանման և հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրման կարգավորման համար անհրաժեշտ ցուցակները, ցանկերը և փաստաթղթերի ձևերը, ինչպես նաև թափոնների վտանգավոր հատկությունների ցանկը.

բ) ստեղծել վտանգավոր թափոնների վերաբերյալ կորդինացիոն-տեղեկատվական կենտրոն:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող 10-րդ օրը:

ԼՂՀ վարչապետ

Ա. Դանիելյան

Կ Ա Ր Գ

Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն վտանգավոր և այլ թափոնների ներմուծման, արտահանման և հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրման վերահսկողության

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն վտանգավոր և այլ թափոնների ներմուծման, հանրապետությունից արտահանման և հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրման վերահսկողության կարգը մշակվել է վտանգավոր թափոնների երկրից երկիր փոխադրման, դրանց հեռացման նկատմամբ հսկողության մասին Բազելյան համաձայնագրի հիմնական դրույթներին համապատասխան:

Սույն կարգի գործողությունը չի տարածվում ռադիոակտիվ թափոնների վրա:

II. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. **Թափոններ`** նյութեր և առարկաներ, որոնք հեռացվում են, նախատեսված են հեռացման համար կամ ենթակա են հեռացման:

3. **Վտանգավոր թափոններ`** թափոններ, որոնք վտանգ են ներկայացնում մարդու առողջության և շրջակա բնական միջավայրի համար:

4. **Այլ թափոններ`** բնակավայրերից հավաքվող թափոններ և կենցաղային թափոնների այրման հետևանքով առաջացած մնացորդներ:

5. **Երկրորդային հումք`** նյութեր և առարկաներ, որոնք արդյունաբերական կամ այլ մշակման, օգտագործման, պահպանման, տեղափոխման մնացորդներ են և որոշակի մշակումից հետո կարող են լիովին կամ մասամբ օգտագործվել:

Կարգում օգտագործվող "վտանգավոր և այլ թափոններ" հասկացությունը վերաբերում է ինչպես թափոններին, այնպես էլ երկրորդային հումքին:

6. **Թափոնների կամ երկրորդային հումքի օգտագործում`** գործողություն, որը բերում է թափոնների կամ երկրորդային հումքի լրիվ կամ մասնակի վերականգնման, վերամշակման` պիտանի դարձնելով այն կրկնակի կամ այլ նպատակով օգտագործելու համար:

7. **Երկրից երկիր փոխադրում`** վտանգավոր և այլ թափոնների ցանկացած փոխադրում որևէ պետության իրավագործությանը պատկանող շրջանից այլ պետության իրավագործությանը պատկանող շրջան (կամ այդպիսի շրջանի տարածքով):

8. **Հեռացում`** գործողություն, որը հանգեցնում է թափոնների վերականգնման, օգտագործման կամ թաղման:

9. **Վերջնական հեռացում`** գործողություն, որը չի նախատեսում թափոնների վերականգնում կամ օգտագործում և հանգեցնում է դրանց թաղման:

10. **Իրավասու մարմին`** Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և օտարերկրյա պետական մարմին, որը կոչված է վտանգավոր և այլ թափոնների ներմուծման, արտահանման ու հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրման հայտերին (ժանուցումներին) պատասխանելու, ինչպես նաև նշված փոխադրման հետ կապված ցանկացած տեղեկատվություն ընդունելու համար:

11. **Առանձնացված կենտրոն`** տվյալ պետության կազմակերպություն, որը պատասխանատու է փոխադրման, փոխադրման ժամանակ տեղի ունեցած վթարների, միջադեպերի, ինչպես նաև հեռացման աշխատանքների, բնական միջավայրի վրա այդ

թափոնների ունեցած ազդեցության մասին տեղեկատվություն ստանալու և տրամադրելու համար:

12. Անձ՝ ցանկացած ֆիզիկական, իրավաբանական անձ, ինչպես նաև իրավաբանական անձի կարգավիճակ չունեցող կազմակերպություն:

13. Արտահանող՝ արտահանող պետության իրավազորությանը պատկանող Լեռնային Ղարաբաղի Չանրապետության կամ օտարերկրյա ցանկացած անձ, որը կազմակերպում է վտանգավոր և այլ թափոնների արտահանում:

14. Ներմուծող՝ ներմուծող պետության իրավազորությանը պատկանող ցանկացած անձ, որը կազմակերպում է վտանգավոր և այլ թափոնների ներմուծում:

15. Արտադրող՝ ցանկացած անձ, որի գործունեության հետևանքով առաջանում են կամ որի սեփականությունն են հանդիսանում վտանգավոր և այլ թափոններ:

16. Հեռացման համար պատասխանատու անձ՝ ցանկացած անձ, որին հասցեագրված են վտանգավոր և այլ թափոններ և որը կատարում է դրանց հեռացման աշխատանքները:

17. Անօրինական շրջանառություն՝ վտանգավոր և այլ թափոնների ցանկացած տեղափոխում, որը կատարվում է սույն կարգի 34-րդ կետում նշված խախտումներով:

III. ՎՏԱՆԳԱՎՈՐ ԵՎ ԱՅԼ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՓՈԽԱԴՐՄԱՆ ՀԱՅՏԱՎՈՐՈՒՄԸ (ԾԱՆՈՒՑՈՒՄԸ)

18. Վտանգավոր և այլ թափոնների ներմուծման, արտահանման և հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրման հայտը (ծանուցումը) հաստատված ձևով ներկայացվում է Լեռնային Ղարաբաղի Չանրապետության իրավասու պետական մարմին: Թափոնների փոխադրման հայտում նշված տեղեկությունները պետք է հստակ ցույց տան փոխադրման և վերանշակման հնարավոր ազդեցությունը մարդու առողջության և շրջակա բնական միջավայրի վրա:

19. Թափոնների փոխադրման հայտը ներկայացվում է վտանգավոր ել այլ թափոններ Լեռնային Ղարաբաղի Չանրապետությունից արտահանելու դեպքում: Այն ներկայացնում են թափոններն արտադրող կամ արտահանող անձինք:

20. Թափոնների փոխադրման ծանուցումը ներկայացվում է Լեռնային Ղարաբաղի Չանրապետություն վտանգավոր և այլ թափոնների ներմուծման կամ նրա տարածքով տարանցիկ փոխադրման դեպքում: Այն ներկայացնում են արտահանող պետությունների իրավասու պետական մարմինները:

21. Արտահանման հայտ ստանալուց հետո Լեռնային Ղարաբաղի Չանրապետության իրավասու պետական մարմինն ստուգում է ներկայացված տեղեկատվությունը և 120 օրվա ընթացքում համապատասխան ծանուցումներ է ուղարկում ներմուծման ու տարանցման պետությունների իրավասու պետական մարմիններին:

22. Ներմուծման և տարանցիկ փոխադրման ծանուցում ստանալուց հետո Լեռնային Ղարաբաղի Չանրապետության իրավասու պետական մարմինը ծանուցողին գրավոր տեղեկացնում է ծանուցման ստացման մասին, ապահովման համար պահանջվող պայմաններով կամ առանց դրանց համաձայնություն է տալիս թափոնների ներմուծման համար, մերժում է այն, կամ հարցում է անում լրացուցիչ տեղեկատվության համար: Ծանուցման պատասխանը պետք է տրվի 60 օրվա ընթացքում, եթե լրացուցիչ տեղեկատվության անհրաժեշտություն չկա:

23. Եթե ֆիզիկական և քիմիական նույն հատկություններով բնութագրվող վտանգավոր և այլ թափոնները հասցեագրվում են դրանց հեռացման համար պատասխանատու նույն անձին ու փոխադրումը կատարվում է ներմուծման և տարանցման պետությունների մաքսային նույն կետով, ապա շահագրգիռ բոլոր կողմերի համաձայնությամբ թույլատրվում է օգտագործել մեկ ընդհանուր ծանուցում: Այդ դեպքում շահագրգիռ կողմերին, բացի ընդհանուր ծանուցումից, ներկայացվում են տեղեկություններ առանձին բեռնաառաքումներով տեղափոխվող թափոնների ստույգ քանակության և կազմի մասին: Ընդհանուր ծանուցումը և համաձայնությունն ուժի մեջ են մնում 1 տարուց (12 ամսից) ոչ ավելի և կարող են ընդգրկել բազմակի բեռնաառաքումներ:

24. Լեռնային Ղարաբաղի Չանրապետության իրավասու պետական մարմինն իրավունք ունի պահանջելու, որպեսզի վտանգավոր և այլ թափոնների յուրաքանչյուր տեղափոխման անվտանգություն ապահովվի երաշխիքով, այդ թվում՝ գրավով:

IV. ՎՏԱՆԳԱՎՈՐ ԵՎ ԱՅԼ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

25. Վտանգավոր և այլ թափոնները կարող են ներմուծվել, արտահանվել և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրվել՝

եթե արտահանող պետությունն իր տրամադրության տակ չունի տեխնիկական հնարավորություններ և անհրաժեշտ օբյեկտներ, հզորություններ կամ համապատասխան տեղեր՝ այդ թափոնների էկոլոգիապես հիմնավորված արդյունավետ հեռացման համար.

եթե նշված թափոններն անհրաժեշտ են ներմուծող պետությանը՝ որպես հումք.

կողմերի միջև պայմանավորված այլ դեպքերում, որոնք չեն հակասում սույն կարգին և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը:

26. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավասու պետական մարմինը թույլատրում է վտանգավոր թափոնների արտահանում, ներմուծում և հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրում, եթե առկա է սույն կարգի 25-րդ կետում նշված պայմաններից մեկը՝ հաստատված թափոններ արտահանող և թափոնների հեռացման համար պատասխանատու անձանց գրավոր համաձայնությամբ (որտեղ նշված է թափոնների էկոլոգիապես հիմնավորված հեռացումը):

V. ՎՏԱՆԳԱՎՈՐ ԵՎ ԱՅԼ ԹԱՓՈՆՆԵՐԻ ԱՐՏԱՐԱՆՈՒՄԸ, ՆԵՐՍՈՒԾՈՒՄԸ ԵՎ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔՈՎ ՏԱՐԱՆՑԻԿ ՓՈԽԱԴՐՈՒՄԸ

27. Վտանգավոր և այլ թափոններ փոխադրողները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանն անցնելիս պարտավոր են ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավասու պետական մարմնից ստացված փոխադրման թույլտվություն:

28. Փոխադրվող թափոնները պետք է փաթեթավորվեն, պիտակավորվեն և տեղափոխվեն ընդունված և համընդհանուր ճանաչում գտած միջազգային կանոնների համաձայն: Դրանք պետք է ուղեկցվեն փոխադրման վերաբերյալ համապատասխան փաստաթղթով, որտեղ նշվում է ամբողջ երթուղին՝ ելակետից մինչև հեռացման վայրը:

29. Վտանգավոր և այլ թափոնների փոխադրման համար պատասխանատու ցանկացած անձ պարտավոր է ստորագրել փաստաթուղթ՝ թափոնների փոխադրման, ստացման կամ տեղիհասցման մասին: Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրման դեպքում նա պարտավոր է փոխադրումն սկսելուց 15 օր առաջ և փոխադրման ավարտից 10 օր հետո այդ մասին գրավոր տեղեկացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավասու պետական մարմնին:

30. Թափոնների հեռացման մասին պատասխանատու անձը պարտավոր է թափոններն ստանալու օրվանից 7-օրյա և դրանց հեռացման գործողությունների ավարտից հետո 10-օրյա ժամկետում այդ մասին գրավոր տեղեկացնել արտահանողին, արտահանող և ներմուծող երկրների իրավասու մարմիններին:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունից թափոնների արտահանման վերաբերյալ ժամանակին համապատասխան տեղեկություններ չստանալու դեպքում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավասու պետական մարմինը պարտավոր է այդ մասին տեղեկացնել ներմուծվող երկրի իրավասու մարմնին:

31. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հարկային պետական ծառայության մարմինները գրանցում են վտանգավոր և այլ թափոնների ներմուծման, արտահանման ու հանրապետության տարածքով տարանցիկ փոխադրման յուրաքանչյուր դեպք, փոխադրվող թափոնների տեսակը, քանակը, փոխադրման երթուղին և յուրաքանչյուր կիսամյակ համապատասխան տեղեկանք ներկայացնում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավասու պետական մարմնին:

32. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավասու պետական մարմինը կարող է սահմանել թափոնների փոխադրման և հեռացման վերաբերյալ սույն կարգին ու Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը չհակասող լրացուցիչ պայմաններ:

VI. ՎՏԱՆԳԱՎՈՐ ԵՎ ԱՅԼ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՀԵՌԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

33. Էկոլոգիապես հիմնավորված են համարվում վտանգավոր և այլ թափոնների հեռացման այն ձևերը, որոնք երաշխավորված են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավասու պետական մարմնի կողմից:

VII. ԱՆՕՐԻՆԱԿԱՆ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

34. Անօրինական շրջանառություն է համարվում վտանգավոր և այլ թափոնների ցանկացած տեղափոխում, եթե այն՝

կատարվել է առանց շահագրգիռ բոլոր պետություններին հաստատված կարգով ծանուցելու.

կատարվել է առանց շահագրգիռ բոլոր պետությունների համաձայնության.

կատարվել է շահագրգիռ պետությունների կեղծիքի, մոլորեցնելու կամ խաբեության միջոցով ստացված համաձայնությամբ.

չի համապատասխանում ուղեկցող փաստաթղթերին կամ ներկայացված ծանուցմանը.

հանգեցնում է Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությանը և սույն կարգին հակասող կանխամտածված հեռացման (օրինակ, վերջնական հեռացման):

35. Եթե Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գտնվող վտանգավոր և այլ թափոնների փոխադրումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավագործությունից դուրս գտնվող անձանց՝ արտադրողի, արտահանողի, ներմուծողի կամ հեռացման համար պատասխանատու անձի մեղքով համարվում է անօրինական շրջանառություն, ապա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավասու պետական մարմինը պարտավոր է այդ մասին տեղեկացնել համապատասխան պետության իրավասու մարմնին և միջոցներ ձեռնարկել, որպեսզի թափոնները հեռացվեն Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքից նշված անձանց կամ պետության կողմից, որի իրավագործությանն են պատկանում նրանք: Եթե դա գործնականորեն նպատակահարմար չէ, ապա համապատասխան ծանուցումը հանձնելուց հետո 30 օրվա կամ փոխադարձ համաձայնությամբ որևէ այլ ժամկետի ընթացքում թափոնները պետք է մշակվեն էկոլոգիապես հիմնավորված ձևով:

36. Այն դեպքում, երբ վտանգավոր թափոնները գտնվում են Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքից դուրս և փոխադրումը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավագործությանը պատկանող անձանց մեղքով դիտվել է որպես անօրինական շրջանառություն ու դրա վերաբերյալ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավասու պետական մարմինը պաշտոնական ծանուցում է ստացել, ապա նա պարտավոր է միջոցներ ձեռնարկել, որպեսզի նշված անձինք կամ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական համապատասխան ծառայությունները վերադարձնեն թափոնները Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածք: Եթե դա գործնականորեն նպատակահարմար չէ, թափոնները պետք է մշակվեն էկոլոգիապես հիմնավորված ձևով՝ ծանուցումն ստանալուց հետո 30 օրվա կամ փոխադարձ պայմանավորվածությամբ այլ ժամկետի ընթացքում:

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքից դուրս թափոնների անօրինական շրջանառությունն իրականացնող, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավագործությանը պատկանող իրավաբանական անձը պարտավոր է լիովին հատուցել անօրինական շրջանառության վերացման համար Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կողմից կատարված բոլոր ծախսերը, ինչպես նաև մուծել տուգանք՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկի չափով:

37. Եթե անօրինական շրջանառության համար արտահանողը, ներմուծողը կամ հեռացման համար պատասխանատու անձը պատասխանատվություն չի կրում, ապա Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավասու պետական մարմինը, համագործակցելով շահագրգիռ բոլոր կողմերի հետ, հնարավոր կարճ ժամկետում ապահովում է թափոնների հեռացումը:

VIII. ՎՏԱՆԳԱՎՈՐ ԵՎ ԱՅԼ ԹԱՓՈՆՆԵՐԻ ՏԵՂԱՓՈԽՄԱՆԸ ԵՎ ՀԵՌԱՑՄԱՆԸ ՄԱՍՆԱԿՑՈՂ ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

38. Վտանգավոր և այլ թափոնների տեղափոխմանն ու հեռացմանը մասնակցող Լեռնային Ղարաբաղի Հանրապետության իրավագործությանը պատկանող, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարածքում գործող, նրա իրավագործությունից դուրս անձինք պարտավոր են՝ ապահովել վտանգավոր և այլ թափոններով շրջակա միջավայրի աղտոտման կանխումը, իսկ եթե դա այնուամենայնիվ տեղի է ունենում, ապա հետևանքները նվազագույնի հասցնելու համար բոլոր անհրաժեշտ միջոցների ձևակերպումը.

թույլ չտալ վտանգավոր և այլ թափոնների ներմուծումը, եթե հիմքեր կան ենթադրելու, որ դրանց հեռացումն իրականացվելու է էկոլոգիապես ոչ հիմնավորված ձևով.

արգելել վտանգավոր և այլ թափոնների տեղափոխումն ու հեռացումը առանց համապատասխան թույլտվության:

Սույն կետով սահմանված պարտականությունները խախտող իրավաբանական անձինք պարտավոր են Լեռնային Ղարաբաղի Հանրապետությանը հատուցել իրենց մեղքով պատճառված վնասը, ինչպես նաև մուծել տուգանք՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նվազագույն աշխատավարձի երկու հազարապատիկի չափով:

**ԼՂՀ կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար**

Ս. Գրիգորյան